



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

637.1

Մ-55

ԳԻՒՆԱՆՏԵՍԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

Գ. ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

ԿԱԹՆԱՏՈՒՆԵՐԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՅԳՅ ԱՐԱՄԵԱՆՑԻ
N^o 8

01 OCT 2010

4V

637-1

U-55

ՀՐԱՏ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԱՄԵԱՆՅԻ № 8.

630
87-ՍԵ

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԶԱՏՈՒՐԵԱՆ:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԿԱԹՆԱՏՈՒՆԵՐԻ

Կ Ա Մ

ԿԱԹՆՈՏ ԿՈՎԵՐԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

(26 պարբերություն)

Երկրագործի համար
գրելը—աղբատին ողոր-
մել է:

Ժ. Բիժո.

Գ Ի Ի Դ Ա Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն



Ս. ՊԵՏԵՐՐՈՒՐԳ
«ԳՈՒՀՎԻՆԵԱՆ ԸՐԱԳԱՏԻՊ» ՏԳԱՐԱՆ
1904

28.06.2013
28.06.2013

22.819
050
11-71

Доз. цензурою. С.-Петербургъ, 1-го Декабря 1903 года.

«Пушкинская Скоропечатня», Лешугуковъ, 4.

Ը Ն Թ Ե Ր Ց Ո Ղ Ն Ե Ր Ի Ն:

Չեռնարկելով Տրատարակութիւնների մի նոր շարք «Գիւղատնտեսական գրադարան» անունով, մենք մեզ թոյլ ենք տալիս նրանց առիթով մի քանի խօսք ասելու:

Սկսելով մեր գրքոյկների առաջին շարքը՝ «Երևելի մարդկանց կենսագրութիւններ» խորագրով, մեր նպատակն էր հնարաւորութիւն տալ ժողովուրդին ծանօթանալու երևելի մարդկանց կեանքի և գործունէութեան հետ: Իբրև աւելի ընդհանուր բնաւորութիւն ունեցող, այդ գրքոյկները մատչելի և հետաքրքրական են ամեն մէկի համար: Բայց ի նկատի առնելով ընթերցողների աւելի լայն խաւեր, այսինքն՝ ժողովուրդին, մենք աշխատեցինք այդ հրատարակութիւնները մատչելի անել նրանց հասկացողութեան և նիւթական կարողութեանը: Եյդ նպատակով մենք մի կողմից աշխատել ենք պարզ և դիւրամբունելի լեզուով գրքոյկներ տալ ժողովուրդի ձեռքը, միւս կողմից էժան գին ենք նշանակել նրանց:

Եյժմ՝ շարունակելով առաջին շարքը, մենք սկսում ենք նորը, «Գիւղատնտեսական գրադարան» անունով, նրպատակ ունենալով ծանօթացնել մեր գիւղացուն գիւղատնտեսական գործունէութեան լաւագոյն ձևերի և միջոցների հետ: Մեր նպատակն է գիւղացուն մի շարք խոր-

Հուրդներ ու ցուցմունքներ տալ և միջոցներ առաջարկել բնութեան հետ աւելի յաջող կուեւելու և իր ուժերը աւելի արդիւնաւոր գործադրելու համար: Թէ որքան մեղ կը յաջողւի այդ ցոյց կը տայ ապագան: Մենք մեր կողմից ամեն ջանք գործ ենք դնելու մեր նպատակին ըստ կարելոյն լրիւ հասնելու համար և այդպիսով գոնէ փոքր ինչ աջակցելու մեր ժողովուրդի տնտեսական բարեւաւորութեան և ընդհանուր զարգացման գործին:

Յ. Արամեանց

Ս.—Պետերբուրգ 1904 թ.



ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

Ասենք թէ ես մի երկրագործ մարդ եմ և ուզում եմ աւելի լաւ կաթնատու կովեր ձեռք բերեմ, քան թէ ես ինքս ունեմ, որպէսզի իմ ունեցած խոտից որքան կարելի է շատ կաթ ստանամ:

Ասենք թէ ես 6 փուլ խոտ ունեմ: Վատ կաթնատու կովը այդ խոտն ուտելուց յետոյ ինձ ամենաշատը կարող է 25—30 լիտր կաթ տալ: մինչ դեռ ես կ'ուզենայի, որ երկու անգամ աւել ստանամ: *)

Իմ ուզածին հասնելու համար բաւական չէ, որ լաւ կաթնատու կովեր առնեմ. պէտք է միաժամանակ նաև վստահ լինեմ, որ երբ առած կովերըս իմ գիւղը կամ ագարակը տանեմ, նրանք այնտեղ էլ լաւ կաթնատու կը մնան և չեն փչանայ:

*) Մեր երկրի կովերն իհարկէ այդքան կաթ չեն տալիս. բայց լաւ և վատ կովերի համեմատութիւնը միշտ միևնոյնն է: Եւրոպայի կովը սովորաբար 6 փուլ խոտի փոխարէն 50—60 լիտր կաթ է տալիս:

Մեծ սխալ կը լինե՞մ արած՝ եթէ կովերս այն-
պիսի ցեղից բնորե՞մ, որը մեծ պահանջներ ունի,
մանաւանդ՝ եթէ ես չե՞մ կարող նրանց բոլոր պա-
հանջները կատարել:

Եթէ լաւ արտաներ և բարեխառն օդ ունեցող
երկրից լաւ կովեր առնենք ու բերենք մի ցուրտ և
վատ արտաներ ունեցող երկիր—նրանք այնտեղ կը
վատանան: Այդպէս էլ ահա շատ անհաշիւ բան կը
լինի, եթէ հոլանդական կովերը մեր չոր ու ցամաք
սարերը փոխադրենք:

Իսկպէս ամենայաւ կաթնատուներն այն կո-
վերն են, որոնք թէ առատ կաթ են տալիս և թէ
արդէն սովորել են իրանց ապրած օդին ու ջրին:

Լաւ կաթնատու կովեր ընտրելիս պէտք է եր-
կու բան աչքի առաջ ունենանք.

1) Պէտք է ընտրենք այնպիսի կովեր, որոնք
ամենից շատ են կաթ տալիս:

2) Պէտք է քննենք և իմանանք թէ արդեօք
այդ կենդանիները այն երկրի ցեղիցն են (չնոսից), որ
տեղ տանելու ենք կովերը և թէ արդեօք վարժուել
են նրանք այն երկրի մուտնդին ու պայմաններին:

Այդ բաների մասին խօսելու համար մենք ե-
րեք մաս կ'անենք մեր դրածը:

1) Կովի ընդհանուր տեսքը:—Առողջութիւնը:
—Բնութիւնը:—Տարիքը:

2) Մարմնի զանազան մասերի քննութիւնը:

3) Ծծերի և նրանց հետ կապ ունեցող գոր-
ծարանների մանրամասն քննութիւնը:

ԸՆԻՅՍՆՈՒՐ ՏԵՍԻՔԸ:—ԱՌՈՂՁՈՒԹԻՒՆԸ:—ԲԸ-
ՆՈՒԹԻՒՆԸ (ԽՍՍԻՍԹԸ):—ՏԱՐԻՔԸ:

Կաթնատու կենդանիներին մանրամասն քննե-
լուց առաջ, պէտք է նրանցից մի քիչ հեռու կանգ-
նենք, որ կարողանանք նրանց ամբողջ ծարմինը լաւ
տեսնել:

Լաւ կովերի ծարմնի բոլոր մասերը պէտք է
քննույշ ու փափուկ լինեն, ինչպէս որ յատուկ է
էզերին:

Փորձաձև և բան իմացող մարդիկ մի անգամ
տեսնելուց արդէն կարող են իմանալ թէ ինչ տե-
սակ կաթնատու է իրանց տեսած կովը: Բայց ան-
փորձ մարդիկ առաջին տեսնելուց կարող են խաբ-
ւել. դրա համար էլ հարկաւոր է մէկ-մէկ և ման-
րամասն քննել կենդանու ծարմնի բոլոր մասերը:

Առաջին անգամ նայելիս, պէտք է ուշադրու-
թիւն դարձնենք, որ կովը մեծ և աչքի ընկնող պա-
կասութիւն չունենայ:

Երկրորդ անգամ և աւելի մանրամասն պէտք է
քննել այն կովերը, որոնք առաջին քննութեան ժա-
մանակ լաւ են դուրս եկել:

Պարարտ ու թիւն: Կաթնատու կովերի զեր
(չաղ) կամ նիհար (լղար) լինելը իր նշանակութիւնն
ունի:

Եթէ մի կով վաղուց է ցամաքել՝ կաթից կը-
տրւել և մտել է ծնելու շրջանը—նա պէտք է պա-
րարտ լինի. եթէ նիհար է—այդ վատ նշան է. այդ

նշանակում է թէ կովը կամ հիւանդ է կամ քիչ մտունդ է ստանում:

Կաթնատու կովի նիհար լինելը վատ նշան է, մանաւանդ եթէ նա ամեն օր առատ կաթն է տալիս. ընդհակառակն՝ դա մի լաւ նշան է, որ ցոյց է տալիս թէ նրա բոլոր կերածը կաթն է գառնում:

Եթէ կովը ամենից առատ կաթ տալու ժամանակները պարարտ (չաղ) լինի, այդ նշանակում է, որ նա վատ կաթնատու է և ոչ մի ժամանակ չի կարող առատ կաթ տալ:

Կաշու և մազի մասին: Կովին առաջին անգամ մի լաւ նայելուց յետոյ, պէտք է մօտենալ և տեսնել թէ ինչպէս է նրա առողջութիւնը:

Լաւ կաթնատու և առողջ կովի մազը հարթ, ողորկ և քնքոյշ է լինում և ոչ թէ կոշտ ու վերցցւած. կաշին էլ նուրբ և քնքոյշ է լինում: Մի ցեղի կովերից ամենալաւ կաթնատուն նա է, որի կաշին ամենից նուրբ է ու քնքոյշ:

Սարոտ և ցուրտ ու խիստ օդ ունեցող երկրում ապրող կովերի մորթն աւելի հաստ ու թանձր է լինում, քան թէ այն կովերինը, որոնք ապրում են բարեխառն կամ տաք օդ ունեցող երկրներում:

Իսկ եթէ այս վերջին տեսակի կովերի մէջ պատահում են առանձնապէս նուրբ ու բարակ մորթ ունեցող կենդանիներ—դրանք ամենալաւ կաթնատուներն են:

Պէտք է միշտ ուշադրութեան առնենք, որ կո-

վի մորթը պէտք է լինի քնքոյշ, ճկուն, ինքն իր վրայ հեշտ ծալուող, մարմինն չկպած. այս նշանները ցոյց են տալիս, որ կովն ընդհանրապէս առողջ է և կարող է լաւ կաթը տալ:

Եթէ կովերի մորթը շփողի ձեւը իւղոտւի, ինչպէս նաև՝ եթէ կովի մազերում շատ թեփ լինի—այդ նշան է, որ այդ կովի տւած կաթը թանձր և իւղոտ կը լինի, այսինքն՝ նրա կաթից կարելի է շատ կարագ ստանալ:

Բայց այդ նշանները մենակ ցոյց են տալիս թէ կաթը որքան իւղոտ կը լինի և ոչ թէ՝ որքան առատ կը լինի:

Մորթը քննելիս պէտք է շփել նաև կողերի մորթը:

Տարիքը: Թէև կաթ տալու կարողութիւնը և կովի տարիքը իրար հետ առանձին մի կապ չունեն, այնուամենայնիւ օգտակար է կաթնատու կովի տարիքն իմանալը, որովհետև հասակը փոխում է կովի մի քանի արտաքին նշանները (որոնց մասին մի քիչ յետոյ կը խօսենք). վերջապէս հարկաւոր է իմանալ թէ կովը դեռ ի՞նչքան ժամանակ կարող է կաթը տալ:

Տարիքը կարելի է իմանալ կովի ատամների կամ նրա եղջիւրների (պողերի) միջոցով: Կովի բերանը բաց անելու համար պէտք է ուժով բռնել վերևի շրթերը, մատները մտցնել թաճակերը, յետոյ միւս ձեռքը շրթունքների արանքով տանել բերանը և բռնել լեզուն. այս դրութեան մէջ կովն էլ չի կարող բերանը փակել և մենք հեշտ կարող ենք նրա ատամները քննել: Եթէ լաւ նայենք ներքևի ծնօտի առաջի ատամներին, որոնց ասում են կտրիչ ա-

տ ա մ ն եր, կր տեանենք, որ ութ հատ են (պատ. 1):




պատկ. 1

Ատամնաշարք 16—20 օրական ծոցու:

Մէջտեղի երկուսին ասում են հերձատամներ (Յ, Ճ), նրանց կողքի ատամներին— առաջին միջնատամներ (Մ, Մ), սրանց մօտ գտնուում են երկրորդ միջնատամները (Բ, Բ), ատամնաշարքի վերջում եղածները կոչւում են խորշատամներ (Խ, Խ):

Մատղաշ և փոքրիկ ձագերը մի շարք կաթի ատամներ ունեն, որոնք շուտով թափուում են և նրանց տեղը դուրս են գալիս վերջնական ատամներ: Կաթի ատամները աւելի փոքր են լինում, քան թէ վերջնական ատամները և ձևով էլ բոլորովին նման չեն նրանց:

Երկրորդ պատկերի վրայ օրոշ երևում է երկու տեսակ ատամների տարբերութիւնը. երկու հերձատամներն ու երկու առաջին միջնատամները վերջնական են. երկու խորշատամները կաթի ատամներ են, երկու երկրորդ միջնատամները՝ թէև վերջնական ատամներ են, բայց դեռ բոլորովին չեն հասել-զար-




պատկ. 2

Ատամնաշարք 3 տարւան: [Երկու միջնատամները հաւասարուում են հերձատամներին:

դացել: Վերջնական ատամները դուրս են գալիս կաթի ատամներից յետոյ՝ մի օրոշ կարգով և օրոշ ժամանակ անցներուց յետոյ. այնպէս որ՝ ատամները քննելով, մենք նրանց փոփոխութիւններից կարող ենք իմանալ կովի տարիքը:

Կարելի է ասել, որ եթէ կովի երկու վերջնատամները բուսել են, իսկ միւսները դեռ կաթի ատամ են մնում, այդ նշանակում է, որ նա արդէն երկու տարեկան է դառնում (պատ. 3):




պատկ. 3

Մօտ 30 ամուսայ ատամնաշարք: Հերձատամները դուրս են եկել. առաջին միջնատամները դուրս են գալիս:

Սյն կովը, որի վերջնական հերձատամները և առաջին միջնատամները բուսել են, արդէն երեք տարեկան է դառնում (պատ. 2):

Սյն կովը, որի վերջնական հերձատամները և երկու զոյգ միջնատամները բուսել են արդէն, չորս տարեկան է դառնում (պատ. 4):




պատկ. 4

4 տարւան ատամնաշարք: Երկրորդ միջնատամները հաւասարուում են առաջիններին. կաթի խորշատամները դեռ մնում են

Վերջնական խորշատամները միայն հինգ տարեկան ժամանակն են բոլորովին հասնում գարգանում:


Հինգ տարին անցներուց յետոյ դժուար է կո-

վի ատամներին նայելով նրա տարիքն իմանալը, որովհետև տարիների հետ ատամները դնալով մաշ-
ւում են և կորցնում իրանց առաջւան սուր ու



պատկ. 5

12 տարւան ատամնաշարը: Ատամների պսակները մաշւել են և ատամները իրա-
րից հեռացել են:



պատկ. 6.

15 ամսւայ մոզու ատամ-
նաշարըը. մաշւած:

Մեր պատկերներով մենք ցոյց ենք տալիս կո-
վերի զանազան տարիքը այս կարգով.


- 16 — 20 օրական կովի ատամնաշարքը պատ. 1.
- 15 ամսական » » » 6.
- 30 ամսական » » » 3.
- 3 տարեկան » » » 2.
- 4 տարեկան » » » 4.

թեք ձևը, իսկ աւելի հնանալով՝ բոլորովին տափականում են: Օ-
րինակ՝ 13 տարեկան կովը շատ տափակա-
ցած և պակաս թը-
ւով ատամներ ունի,
ինչպէս կարելի է տես-

նել 5-դ պատկերից:
Ինչ որ մինչև հի-
մա ասինք կովերի ատամների մասին—միայն հասարակ ցեղե-
րի համար է ձիշտ, բայց երբ
խօսքը շուտ հասնող ցեղերի
մասին է, այն ժամանակ բանը
ոլորովին փոխւում է, որովհե-
տև նրանց վերջնական ատամնե-
րը սովորական ժամանակից վաղ
են դուրս դալիս (պատ. 8):

- 5-դ տարին մտնող կովի ատամն. պատ. 9.
- 5 տարեկան » » » 7.
- 8 տարեկան » » » 10.
- 12 տարեկան » » » 5.


կովերի տարիքը
ցոյց տւող ուրիշ նշան-
ներ էլ կան, բայց նրան-
ցով տարիք ճանաչելը
այնքան էլ հեշտ չէ.
այդ նշանները եղջիւր-
ներն են (պոզերը):



պատկ. 7

5 տարեկանի ատամնաշարը: Խորշա-
տամները հաւասարւում են միջնատ-
ամներին. հերձատամները սկսել են
մաշւել:


Եթէ մի քիչ լաւ
նայենք կովի եղջիւրնե-
րին, կը տեսնենք, որ
նրանց արմատի մօտեր-
քը, ներքի մասի վրայ
խորդուբորդ փորւած-
ներ կան, որոնք իրար
վրայ շարած օղակների
նման են: Առաջին օղակը
կազմւում է կովի երեք
տարեկան հասակում,
երկրորդը՝ չորս և եր-
րորդը՝ հինգ տարեկան
ժամանակ. դրանից յե-
տոյ տարին մի օղակ է աւելանում, այնպէս որ կո-
վի տարիքը կարող ենք իմանալ՝ եթէ օղակները
հաշւենք և ստացած թւին աւելացնենք երկու:



պատկ. 8

վաղահաս ատամնաշարը. երեք
տարում խորշատամները բուսել են
արդէն, իսկ հերձատամները դեռ
չեն մաշւել:

Տասնումէկերորդ պատկերի վրայ մենք տես-



պատկ. 9

5-դ տարին ծանոց կովի ատամ-
աշարքը. վերջնական խորշատ-
ամենը սկսել են բուսնել:

օղակները, որովհետև ա-
ռաջինը՝ որ եղջիւրի վրայ
այդ օղակներն այնպէս
պարզ չեն երևում ինչպէս
պատկերի վրայ և երկ-
րորդ՝ որ ծախողները կովի
տարիքը պակաս ցոյց աա-
լու համար մի տեսակ զոր-
ծիքով ջնջում են կովի օ-
ղակներից մի քանիսը կամ բոլորը. այնպէս որ եթէ
կովի ատամները ցոյց են տալիս, որ նա 4 կամ ա-




պատկ. 11

Օղակաւոր եղջիւր, որի ակոս-
ները ցոյց են տալիս նրա ա-
մեն տարի անելը, երեք տարե-
կանից սկսած:

Բնուէթիւնը (խասիաթը): Կովի մարմինը
շոշափելուց կարելի է իմանալ նրա բնուէթիւնը:

նում ենք մի եղջիւր, որ
չորս օղակ ունի. չորսին
աւելացնենք 2—կը լինի 6,
որ ցոյց է տալիս թէ այդ
եղջիւրը 6 տարեկան կովի
եղջիւր է:

Հարկաւոր է խիստ
ուշադիր քննել կովի եղ-
ջիւրները և նրանց վրայ
եղած տարիք ցոյց տուող



պատկ. 10.

8 տարեկանի ատամնաշարքը:

են տալիս, որ նա 4 կամ ա-
ւելի տարեկան է, իսկ եղջիւր-
ների վրայ ոչ մի օղակ չկայ,
այդ նշանակում է թէ ծա-
խողը խարելու նպատակով
ջնջել, անհետացրել է օղակ-
ները:

եթէ կովը զրգուող բնուէթիւն ունի, այն ժա-
մանակ յուզուած է, շարժուած, տեղը հանգիստ չի
ձնում. սրանք վատ նշան են:

Լաւ կովերը նրանք են, որոնք քաղցր և հան-
դարտ բնուէթիւն ունեն և սիրով են թոյլ տալիս,
որ մարդիկ իրանց մօտենան ու զուրգուրեն:

Բոյորովին հաստատ է, որ շուտ զրգուող կո-
վերի կաթը երբէք առատ չի լինում. նրանց վատ
բնուէթիւնը կարելի է լաւ խնամքներով ուղղել:

Ուրեմն առաջին քննուէթեան ժամանակ կովերի
վրայ պէտք է այս յատկուէթիւնները տեսնենք.
ընդհանուր կազմը ոչ մի պակասուէթիւն պէտք է
չունենայ. նա պէտք է լինի նուրբ, նիհար և աւելի
չոր-չոր ձևեր ունենայ, քան թէ լիքն ու կլոր լինի:

ՄԱՐՄՆԻ ԶԱՆՍ.ԶԱՆ ՄՍ.ՍԵՐԻ ԳՆՆՈՒԹԻՒՆԸ:

Շատերն ասում են թէ լաւ կաթնատու կովե-
րի ամեն մի օրգանը պէտք է որոշ կազմաւածք ու-
նենայ. օրինակ՝ ասում են, որ զլուխը պէտք է փո-
քըր լինի, իսկ վիզը՝ բարակ. բայց չի կարելի հաս-
տատ ասել, թէ փոքր զլուխ ունեցող կովերն ան-
պայման լաւ են, իսկ մեծ զլուխ ունեցողները՝ վատ:
Սյդ յատկուէթիւնները ջուկ-ջուկ առած ոչինչ չեն ցոյց
տալիս. այս կամ այն օրգանի կազմաւածքը կենդա-
նու. ցեղից է կախւած:

Մենք չենք կարող պահանջել, որ մեր երկրի
կովերը բրեւոննան կովի զլուխն ունենան. առանց
այդ յատկուէթեան էլ մեր կովը կարող է լաւ կաթ-
նատու լինել, ի հարկէ, որքան իր ցեղը ներում է:

Այստեղ աւելորդ ենք համարում այնպիսի մանրամասնութիւնների մասին խօսելը, որոնք լուր կաթնատու ընտրելու համար նշանակութիւն չունեն:

Մի ցեղից պէտք է այն կովերն ընտրել, որոնց կմախքը ամենից նուրբ կազմութիւնն ունի. բայց պէտք է դիտենայ, որ այդ պայմանն էլ ոչ մի էական նշանակութիւն չունի:

Այժմ հետզհետէ կր քննենք կովի մարմնի զանազան մասերը, որ ցոյց տանք այն հանդամանքները, որոնք որեւէ կարեւորութիւն ունեն կաթնատուի ընտրութեան համար:

Բերանի կոնոնները: Եթէ դիտելու լինենք կովի շրթունքներն այն տեղերում, որտեղ վերինն ու ներքինը միանում են իրար հետ, կր տեսնենք, որ նրանց վրայ դուրս ցցւած մասեր կան, սրանք կոչւում են բերանի կոնոններ կամ գնդակներ:

Այս կոնոնները կամ գնդակները միշտ միևնոյն ձևը չունեն. մի երկուսը մեծ են լինում, միւսները՝ փոքր, մի քանիսը՝ կլոր գլխով, միւսները՝ սրածայր:

Նկատել են, որ այդ գնդակների ձևն ու կաթի մէջ եղած կարագի որքանութիւնը մի տեսակ կապւած են իրար հետ:

Եթէ շրթունքի ներքին մասում երկու մեծ և մի քանի կլոր կոնոններ լինեն—այդ շատ լաւ նշան է. եթէ միայն սրածայր գնդակներ լինեն—վատ նշան է. եթէ մի քանիսը կլոր լինեն, իսկ մեծ մասը՝ սրածայր—այդ նշանակում է, որ կովը միջակ

տեսակի կաթնատու է. ամենալաւ կարագ տուող կովերի բերանի կոնոնները մեծ մասամբ կլոր են: Թէև զխտութիւնը այս բանը չի հաստատել, բայց արժէ նրա վրայ ուշադրութիւն դարձնել:

Կոնոնների ձևը կարեւոր է միայն կաթի իւղոտ լինելն իմանալու համար. բայց նա չի ցոյց տալիս թէ կովը որքան կաթ կարող է տալ:

Ս. կանչներ: Կովի ականչները պէտք է լայն լինեն և խիտ մազով ծածկւած. մեծ նշանակութիւն ունի՝ երբ ականչի ներսի երեսը ծածկւած է լինում մի տեսակ ճարպոտ նիւթով, որին ասում են ականչաղտ կամ սմուկ: Որքան շատ լինի այդ աղտը, այնքան էլ կովի տւած կաթը պարարտ ու կարագոտ կը լինի:


Առատ կարագ տուող կովերը մի ուրիշ նշան էլ են ունենում. այդ նրանց մորթի դեղին գոյնն է. այն կենդանիները, որոնց կաթի մէջ շատ կարագ կայ—մուգ դեղին գոյնի մորթ են ունենում:

Մորթի գոյնը որոշելու համար պէտք է նայել կաթնատուի աչքերի, ծննդական գործարանի և կարիքի ծակի շուրջն եղած մորթին. բայց այդ բանն աւելի լաւ երևում է ականչների վրայ. եթէ լոյսի դէմ բռնելու լինենք, կարող ենք ասել թէ այս կամ այն կովի մորթը դեղին է, դեղնագոյն թէ սպիտակաւուն:

Կախոն կամ ուլունք: Կովի վզի տակից մորթի մի ծալւածք կայ, որ կախ է ընկած առջևի ոտների արանքից. դրան ասում են ուլունք կամ կախոն (պատ. 12, թիւ 20). այդ ծալքը լաւ

նշան է համարուում, եթէ մեծ չէ լինուում. բայց որովհետեւ դրա մեծանալը կապ ունի կովի ցեղի կամ տեսակի հետ, դրա համար էլ կաթը տալու կողմից դրան չգէտք է մեծ նշանակութիւն տալ:

Ուսեր: Ասում են թէ լաւ կաթնատու կովերի ուսերը չորացած ու դուրս ցցւած են երևում: Երբ ուսերը ոսկրոտում, նիհարում են, դա նշան է թէ կովի միսն ու ճարպը պակասել են, որովհետեւ նիհարութիւնն ամենից առաջ ուսերի վրայ է նրկատուում:



պատկ. 12

1. Շիշք. մազակոյտ. 2. ծոճրակ. 3. ուլ. 4. թեկուներ. 5. կողեր. 6. կուշտ, փոր. 7. քամակ. 8. ազդր. 9. դաւակ. 10. պոչարմատ. 11. միջնայր. 12. չետոյր. 13. պարարակ. 14. ստինք, ծիծ. 15. պտուկ, պլուկուներ. 16. սրուներ. 17. կարթ. 18. բիթ. 19. վիզ. 20. կախոն. 21. լանջ. 22. բազկուկ, 23. կաթնեղակ, փորեղակ. 24. արծուկ. 25. ուսեր

Մսաթափ ուսերով կովը չաղանալու ձգտում չի ունենում, այլ աւելի նիհարում է. այդ նշանակում է թէ ստացած սնունդը նրա մարմնի մէջ ճարպ չի դառնում, այլ կաթ. ուրեմն ուսերի այդպէս լինելը, անուղղակի կերպով ցոյց է տալիս, թէ կովը լաւ կաթնատու է:

Կան այնպիսի կովեր, որոնց ուսերի նիհար ու մսաթափ լինելու պատճառը նրանց կազմւածքն է. պատահում է շատ անգամ, որ այդպիսի ուսեր ունեցող կովերը շատ ընտիր կաթնատու են դուրս գալիս: Բայց այս մի բացարձակ բան չէ. անպատճառ հարկաւոր չէ, որ կովը նիհար ուսեր ունենայ՝ լաւ կաթնատու լինելու համար:

Կուրծքը: Ծառերը կարծում են թէ կուրծքի նեղ ու հուպ եկած լինելը լաւ նշան է. բայց այդ սխալ է: Լաւ կաթնատուի կուրծքը առանց այն էլ նեղ ու հուպ եկած է երևում. բայց մեր աչքին է միայն այդպէս երևում և դրա պատճառն այն է, որ կովերի մարմնի յետակողմի մասը՝ այսինքն ազդրերն ու կոնքը միասին, շատ աւելի լայն է քան թէ կուրծքը: Այս բանը յատուկ է բոլոր էգերին. դրա հակառակ՝ կզների և ցուլերի մարմնի առաջակողմը, միշտ աւելի զարգացած և ծաւալուն է երևում:

Բացի դրանից կոնքը մի ոսկորի գոտուց է կազմւած և ինչքան էլ կենդանին նիհար լինի՝ կոնքը պահում է իր ծաւալը և չի փոքրանում. դրա համար էլ կուրծքը համեմատաբար կոնքից նեղ և

սեղմւած է թւում. բայց այդպէս միայն մեր աչքին է երևում:

Կուրծքը առանց դրան էլ անհրաժեշտ է, որ զարգացած ու խոշոր լինի:

Փոքր: Կուրծքի նման՝ փորն էլ պէտք է խոշոր լինի, որ սննդական գործարանները լաւ զարգանալ կարողանան և կենդանին ախորժակով ուտի, որ շատ կարեւոր է լաւ կովերի համար:

Ողնաշարը (մէջքի իլիկը), քամակը: Կովի գլխից մինչև պոչը ձգւում է ողնաշարը, որ շատ նման է համրիչի (տէրողորմեայի):

Ողնաշարը կազմւած է իրար շատ մօտիկ գրանւող հատիկներից, որոնց ասում են ողներ: Սովորաբար մենք չենք զգում ողների արանքում եղած դատարկութիւնը. բայց կան այնպիսի կովեր, որոնց ողների արանքներին եթէ ձեռ տանք, կը տեսնենք, որ ողներն իրար կպած չեն, այլ իրարից բաժանւում են մեծ կամ փոքր խորութիւն ունեցող պարապ արանքներով:

Երկու ողների արանքում եղած պարապ տեղերին մակ ախոսներին ասում են կաթի վերին կամ աղբիւրներ:

Այս կաթի դռները թէև ամեն ցեղի կով չունի, բայց եթէ պատահեց, որ կովն ունեցաւ—լաւ նշան պէտք է համարել:

Եթէ լաւ կաթնատուների ողնաշարին քամակի մէջ տեղից դէպի պոչը մասներով հետևենք, կը տեսնենք, որ ողների վերևի մասը փոխանակ սրածայր լինելով՝ տափակ են, երբեմն նոյն իսկ փոսա-

ցած ու ներս ընկած, այնպէս որ մեր մատները փոխանակ դուրս ցցւած մասերի պատահելու, ընդհակառակն՝ պատահում են ախոսների և առւակների նման փոս ընկած տեղերի. այս ախոսները, մանաւանդ եթէ որոշ և բաւական մեծ երկարութիւն ունեն, պէտք է լաւ նշան համարել:

Կողերը: Ենչառութեան լաւ կամ վատ լինելն իմանալու համար պէտք է քննել կողերի շարժութիւնները, որոնք պէտք է կանոնաւոր լինեն:

Կոնքը: Անպայման հարկաւոր է, որ կովի կոնքը լայն լինի և ընդարձակ, որ ազդրերն իրարից հեռու լինեն և նրանց մէջը մի ընդարձակ բաց տեղ մնայ:

Ծծերն իրանց խողովակներով այդ տեղն են բռնում, դրա համար էլ, որքան տեղն ընդարձակ լինի, այնքան էլ ծծերը լաւ կը կազմեն, լաւ կը զարգանան:

Քիչ անգամ է պատահում, որ կովի ազդրերն իրարից հեռու լինեն, և ծծերը քիչ լինեն զարգացած:

Ընդհանրապէս միշտ յարդի են այն կովերը, որոնց կոնքերը լաւ են զարգացած, որովհետև նրանք հեշտութեամբ կը ծնեն. կոնքի զարգացած լինելը՝ էղի լաւ յատկութիւններից մէկն է:

Պոչը: Երկար պոչը լաւ նշան է համարւում. նկատել են, որ երկար պոչ ունեցող կովի կոնքը ընդարձակ է լինում և լաւ զարգացած:

ԾԾԵՐԻ ԵՒ ՅԱՐԱԿԻՅ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ:

Կաթնատուների ամենազլխաւոր օրգանները ծծերն են. զրա համար էլ նրանց քննութիւնն ամենից շատ է հարկաւոր:

Խորհուրդ ենք տալիս այս գրքովը կարգացողին, որ կարգալը բաւական համարի, այլ զնայ կենդանու մօտ և ձեռքով շոշափէ նրա մարմնի այն բոլոր մասերը, որոնց մասին խօսելու ենք այս զըլխում:

Նոյն իսկ անփորձ մարդիկ կարող են վստահ լինել, որ շուտով կարող են վարժուել կաթնատուների լաւ և վատը ճիշտելուն, եթէ ուշադրութեամբ հետեին մեր ասածներին:

Պէտք է քննել կաթնատուի մարմնի երեք գանազան մասերը:

- 1) Ծծերը
- 2) Ծծերի դուրս ցցւած երակները և
- 3) Կաթնանշանը:

Ծծերի քննութիւնը: Յայտնի է, որ կաթը ծծերումն է պատրաստուում, զրա համար էլ շատ հասկանալի է, թէ ինչու այն կաթնատուն են լաւ համարում, որի ծծերը մեծ ու զարգացած են լինում:

Ծծերի ձևը թէև որոշ ազդեցութիւն չունի, բայց պէտք է աչքի առաջ ունենալ. որովհետև այս կամ այն ձևը նշան է, թէ օրգանները մեծ թէ փոքր ծաւալ ունեն:

Եթէ ծիծը ետեից դէպի առաջ շատ է երկարացած և տարածելով փորի ներքեից դէպի կուրծքն է առաջանում (պատ. 13), այդ մի լաւ նշան է. կարող է պատահել, որ այդ ձևի ծիծը մեծ չերևայ. մինչև անգամ 14-դ պատկերի մէջ նկարած՝ շատ կախ ընկած ծծից էլ փոքր երևայ, բայց յարգի պէտք է համարել առաջինը, որովհետև երկար լինելով՝ շատ էլ ծաւալ ունի:



պատկ. 13

Լաւ ծիծ, դէպի կուրծքը շառաչացած. ծծի առջևը երևում է փորի երակը:



պատկ. 14

Կախ ընկած ծիծ.

Լաւ նշան է նոյնպէս, եթէ քննողը կողքին կանգնած ժամանակ նկատէ, որ ծծերը ազդրերի ետեի կողմից դուրս են ցցուում:

Ծծերի լայնքի զարգացումը կախուած է ազդրերի հեռաւորութիւնից, այսինքն՝ կոնքի լայնութիւնից:

Կարևորը ծծի տարածութիւնն է և ոչ թէ ձևը. բայց որովհետև մեծ ծաւալ ունեցող ծծերը երկար ու լայն ձևեր ունեցող կենդանիների մօտ են պատահում, զրա համար էլ նրանց նախապատիւ են համարում:

Աչքով քննելը բաւական չէ, պէտք է ծծերը ձեռքով էլ շոշափել:

Նախ պէտք է ճիշտ իմանալ թէ արդեօք ծր-

Տերի մեծութիւնը կաթ արտադրող գեղձերի զարգացած լինելունցն է թէ ոչ:

Շատ անգամ թէև ծիծր մեծ է երևում, բայց և այնպէս կովը քիչ կաթ է տալիս. պատճառն այն է, որ այդ տեսակ ծծերի մէջ գեղձերի վերայ զարգացած են իւղային մասեր, որոնք թէև ծծերը մեծ են ցոյց տալիս, բայց արգելում են շատ կաթ պատրաստելուն. այդ տեսակ ծծերին ասում են *մ ս ո տ ծ ծ Ե ր*:

Շատ հեշտ է մսոտ ծծերը ճանաչելը. նրանց ծաւալը չի փոքրանում կթւելուց յետոյ. փոխանակ սեղմելիս սպունգի նման հուպ գալու, նրանք թրւում են պինդ և ուռած:

Բոլորովին ուրիշ կազմուածք ունեն լաւ ծրծերը. սրանց կազմող գեղձերն աւելի են զարգացած, իսկ իւղային և մսալի մասերը՝ թոյլ. կթւելուց յետոյ սրանց ծաւալը փոքրանում է. փոխանակ վատ ծծերի նման պինդ ու թանձր մնալու՝ լաւ ծծերը, երբ կաթով լիքը չեն՝ սպունգի նման հուպ են գալիս սեղմելիս. նրանց մէջ զգացւում են փոքրիկ հատիկներ, փոխանակ ճարպի կոյտերի:

Լաւ ծծերը, երբ կթւելով կամաց-կամաց դատարկւում են, իրանց մորթի վրայ ծալքեր են առաջ բերում՝ որոնք ուղղւում են զէպի վեր. (պատ. 15):

Այս ծալքերը լաւ նշան են. սրանք ցոյց են տալիս թէ մի ժամանակ ծիծր շատ լայն է եղել, այսինքրն քիչ առաջ կովը առատ կաթ է ունեցել:



պատկ. 15

Ծծի վրայ ցածից վեր բարձրացող մորթու ծալքեր և երկու աւելորդ պտուկներ:

Ծծի մորթին էլ նշանակութիւն ունի. լաւ ծծերի մորթը նուրբ ու քնքոյշ է լինում. շատ յարգի են այն ծծերը, որոնց մորթը ծածկած է մետաքսանման (արբեշումի պէս) նուրբ մազերով: Թէև ծիծր իսկապէս երկու գեղձից է կազմւած, բայց զրոսից բաժանւում է չորս մասի, որոնք կոչւում են քառորդներ. սրանց կարելի է շոշափելով միմեանցից որոշել:

Երբեմն այս քառորդները իրար հաւասար չեն լինում. առաջին երկուսը երբեմն վերջին երկուսից փոքր են լինում: Որքան քառորդները մեծ լինեն, այնքան էլ կովը շատ կաթ կը տայ:

Ամեն մի քառորդ մի պտուկ ունի (պատ. 12 թիւ 15). սովորաբար ամեն կով չորս պտուկ ունի, բայց երբեմն ետեի քառորդի վրայ երևում են երկու փոքրիկ աւելորդ պտուկներ (պատ. 15), որոնք լաւ նշան են, մանաւանդ եթէ կարելի է կթել նրանց: Եթէ չորս պտուկներից մէկը կամ մի երկուսը կաթ չտան--շատ վատ նշան է:

Մեծ պտուկները փոքրերից աւելի լաւ են, որովհետև ցոյց են տալիս թէ քառորդները մեծ ծաւալ ունեն և լաւ են զարգացած:

Ծծերի երակների (դամարների) քն-

նութիւնը: Ծծերից զուրս եկող երակները զարգացումը մեծ նշանակութիւն ունի:

Որքան այդ երակները լայն լինեն, այնքան էլ նրանք շատ գործ կը կատարեն, այնքան էլ կովի տւած կաթը առատ կը լինի:

Երակների քննութիւնը բոլոր նշաններից աւելի կարևոր է, որովհետև նրանք հաստատ և ապահով նշաններ են:


Երբ երակները ծծերի առջևը շատ զարգացած են լինում (պատ. 13) այդ լաւ նշան է. նրանք պարզ աչքով երևում են փորի վրայ՝ պարանի պէս երկար ձգւած:

Նրանց ծաւալը լաւ իմանալու համար պէտք է լայնութիւնը շոշափել. նոյն իսկ աչքին չիրևացող երակները ձեռքով հեշտ են զտնուում, պէտք է միայն քննութիւնն սկսել ծծի առջևի մասից.— իսկոյն ձեռքի տակ են ընկնում երկու խուրձ երակներ, որոնք երկու կողմից գնում են դէպի կուրծքը: Միանգամ ձեռքով սրանց մեծութիւնն իմանալուց յետոյ, հետևելով նրանց երկարութեանը՝ կը տեսնենք, որ կուրծքի մի կէտում կայ մի ծակ, որից այդ երակները մտնում են մարմնի մէջ և որին ասում են կաթի ներքէի դուռը կամ աղբիւր. այս ծակը երբեմն երկուսն է լինում, երբեմն մէկը:

Փորի վրայ եղած կաթնադռները մէջքի վրայ եղածներից կարևոր են: Եթէ այդ մուտքը լայն է, նրա միջից անցնող երակն էլ մեծ է լինում և ընդհակառակն՝ եթէ նեղ է այդ դուռը, այն ժամանակ այդ տեղից անցնող երակները չեն կարողանում լաւ

մեծանալ ու զարգանալ: Ինչ խօսք՝ որ լաւ նշան է, եթէ երկուսի տեղ այդ ծակերը չորսն են:

Բացի այս երակները՝ ծծերի վրայ ուրիշ նրշաններ էլ կան, որոնք նոյնպէս կարևորութիւն ունեն. սրանք երբեմն երևում են մորթի տակից և ծծերի վրայ ձևացնում են կճանիշներ, ինչպէս կարելի է տեսնել 16-դ պատկերի վրայ:



պատկ. 16

Ծծի վրայ երևում են կանախներ:

իսկ միւսով շոշափել նրանց մորթի ներքէի մասերը:

Ծննդական գործարանի ներքէր մի մաս կայ, որ կոչւում է միջնայք. երբեմն մի կամ մի քանի երակ ծծերից բաձրանալով անցնում են միջնայքով և գնում են դէպի ծննդական գործարանը, սրանց էլ կարելի է շոշափելով գտնել:

Երբ միջնայքի՝ մանաւանդ, ծծի երակները լաւ են երևում, այդ լաւ նշան է. պէտք է միշտ յիշել, որ ոչ թէ երակներն են կարևոր, այլ նրանց մեծ ծաւալը:

Քննութեան ժամանակ պէտք է ուշադիր լի-

կարող է պատահել, որ երակները չնըշմարեն. այն ժամանակ նրանց զարգացած լինելն իմանալու համար պէտք է մի ձեռքով բարձրացնել ծծերը

նել և այս երակները ճարպի թելերի հետ չլիցթել, որոնք նոյնպէս միջնայքում են գտնուում. այդ շփոթութիւնը պատահում է մանուսանդ գեր կովեր քննելիս:

Երակները ճարպի թելերից զանազանելու համար ամենալաւ միջոցը երկու մատով նրանց սեղմելն է: Մասներով հուս տալիս արիւնը երակներում կանգնում է և սևացնում է երակը, մինչ դեռ ճարպի թելերը ոչ մի փոփոխութիւն չեն ունենում:

Երակները ամենից հաստատ ու որոշ տեղեկութիւններն են տալիս և նրանց քննութիւնը շատ հեշտ է: Ամենից հաստատ տեղեկութիւն տալիս են այն երակները, որոնք գտնուում են ծծերի առաջակողմի վրայ. ուրեմն ամենից աւելի սրանց պիտի ուշադրութեամբ քննենք:

Կաթնանիշի քննութիւնը: Կովը հարկաւոր է դիտել քամակի կողմից. դրա համար պէտք է պոչը բարձրացնել—որ յետակողմի բոլոր մասերը լաւ երևան: Պոչի տակը սրբանն է (կարիքի ծակը) նրա ներքևը՝ ճննդական գործարանը, կողմնակի յետոյքները և ներքևի բարձերը, որոնք շրջափակում են ծծի յետակողմի մասը (պատկ. 17):

Ծննդական գործարանի, բարձերի և ծծի յետակողմի բաժնին ասում են միջնայք (տե՛ս կաթնանիշի պատկերը):


Ուշադիր դիտելով այս մասերը՝ մենք տեսնում ենք, որ սրանց մազերը միշտ միևնոյն ուղղութեամբ չեն գնում. օրինակ՝ բարձերի վրայ եղած մազերը վերևից ցած են իջնում: Եւ իսկապէս եթէ

մարդ վերևից ներքև մազերի վրայով ձեռքը տանի, կը տեսնի որ նրանք բարձրից ցածր են գալիս. իսկ եթէ նոյն ձևով ձեռքներս ծծի յետակողմի մասի վրայից դեպի ներքև քսենք, կը տեսնենք որ նրանք վերև են բարձրանում:

Ցածից վերև գնացող մազերը աւել կամ պակաս տարածւում են ծծի յետակողմի մասերի և միջնայքի վրայ. այստեղ նրանք կաղմում են զանազան ձևի պատկերներ, որոնց ասում են կաթնանիշ (պ. 17):

Կաթնանիշի սահմանը որոշուում է մի դժով, որտեղ մազերը փոխում են իրանց ուղղութիւնը. այդ դիժը շատ անգամ պարզ երևում է. բայց եթէ անորոշ լինի այդ դիժը, այն ժամանակ կարելի է իմանալ ձեռքով շփելով. մատներն հեշտութեամբ զգում են թէ որտեղ են մազերն իրանց ուղղութիւնը փոխում:

Կաթնանիշները զանազան ձևեր են ունենում. սրանց ափերին կամ մշտեղերը պատահում են մասեր, որոնց մազերի ուղղութիւնը իրանց մօտերքն եղած մազերի ուղղութեան հակառակ է. սրանք ձուլաձև են լինում, երբ բաւականին ծաւայ են ունենում. իսկ երբ երկար ու սեղմուած են՝



պատկ. 17
Քնարածե կամ ֆլանդրիական կաթնանիշ, որ բարձրանում և շրջափակում է ճննդական գործարանը:

այն ժամանակ հասկաձև են լինում: (պատկ. 18)

Պէտք է լաւ դիտել նրանց ունեցած ձևը, որովհետեւ ձուռածե ու հասկաձև մասերը՝ նայած թէ ինչ դիրք ունեն, կարող են նպաստաւոր կամ աննպաստ լինել: Այս մասին քիչ յետոյ կը խօսենք:



պատկ. 18.

Կորագիծ կաթնանիշ՝ եզերքների վրայ բաւականին կլորացած և քիչ տարածւած. անմիջապէս ծրննդական գործարանի ներքեւ և աջակողմը տեսնուած է մի հասկաձև էլ:

1) Գ ն ա ռ ա ձ լ ե ե ռ կամ Ֆլանդրիականներ (պատ. 17). սրանց կաթնանիշը բարձրանում է մինչև ծրննդական գործարանը և շրջապատելով նրան՝ առնում է իր մէջ:

2) Ե զ ե ռ ը ո տ ն ե ռ: Սրանց կաթնանիշը բարձրանում է մինչև ծննդական գործարանի ասիերը

Սասցիներ, որ կաթնանիշները զանազան պատկերներ են ձևացնում. նրանց ձևը լաւ տեսնելու և զինը լաւ հասկանալու համար, պէտք է ծծի մորթը յետեւից գուրս քաշել ու տարածել, որ կարողանանք բարձերի ներքին երեսի վրայ էլ քննութիւն կատարել:

Այստեղ մենք մէջ ենք բերում միայն 8 ձևի կաթնանիշ, որոնց առաջին անգամ դիտել, ուսուցնասիրելու դասաւորել է Գենոն գիտնականը:

կամ ներքեր և լինում է երբեմն մէկ, երբեմն էլ երկու շերտի ձևով (19-դ. պատկերում եզածը միշերտանի է):

3) Կ ո ռ ա գ ծ ե ռ. (պատ. 18). Սրանց կաթնանիշը աւելի կամ պակաս չափով կլորանում է եզերքների վրայ. բաւական լայն ու երկայն բարձրանում է վերև, բայց քիչ է տարածւում:


4) Ե ռ կ ե ղ շ ի լ ը ռ ա ձ լ ե ե ռ: Սրանց կաթնանիշը վերևի մասում վերջանում է երկու եղջիւրի ձևով (պատ. 20):

5) Ու ղ ղ ա չ ա փ ա ձ լ ե ե ռ: (պատ. 21): Սրանց կաթնանիշը վերևի մասում ձախ կողմի վրայ մի ուղղանկիւնի երկարաձրգուցն ունի:

6) Գ ի ն ա մ ա ն ա ձ եւ ե ռ կամ պ ու ա տ ու ա ն ն ե ռ: Գրեթէ քառակուսի և զինու քառանկիւնի ամանի նման են լինում և քիչ են բարձրանում: (պատ. 22.)

7) Լ ի մ ու ղ ե ա ն ն ե ռ: * Սրանց կաթնանիշից դէպի վեր՝ անկիւնի նման մի փոքր սրածայր երկարութիւն է բարձրանում (պատ. 23):

* Գենոնը այս անունը վերցրել է Լիմուզէն գաւառի անունից:



պատկ. 19.

Միշերտանի եզերքու կաթնանիշ որ բարձրանում է մինչև ծննդական գործարանի ներքեր:

8) Ք առ ա կ ու ս ի ա ձ և եր: Սրանց քառանկիւ-
նի կաթնանիշը (պատ. 24) ոչ մի երկարաձգումն
չունի:

Գենոնի դասակարգութիւնը ի հարկէ բացար-
ձակ նշանակութիւն չունի, որովհետեւ բացի այս 8
որոշ ձևերը պատահում են շատ ուրիշ ձևեր:

Կաթնանիշի մի կողմը միշտ աւելի զարգացած
է լինում և համարեա թէ միշտ ձախակողմինն է,
որ աւելի մեծ ծաւալ ունի:



պատկ. 20.

Երկեղջիւրածն կաթնանիշ, որի
վերևի մասում տեսնում են եղ-
ջիւրի ձևով երկու երկարացած
մասեր:

Թէև միմին պատահում են բացառութիւն-
ներ, բայց ընդհանրապէս կարելի է ասել, որ լաւ
կաթնանիշ ունեցող կովերը ամենալաւ կաթնատու-
ներն են լինում:

Սյստեղ նորից կրկնում ենք, որ կաթնանիշի

չիմաբացատրենք թէ
ինչ կարևորութիւն ունի
կաթնանիշը:

Նկատել են, որ մի
կապ կայ ծծերի յետա-
կողմեան քառորդների մե-
ծութեան և կաթնանիշի
մէջ, ինչպէս որ միշտ մի
կապ է լինում առաջին և
յետին քառորդների մէջ:
Ուրեմն կաթնանիշի ընդ-
արձակ լինելը ցոյց է տա-
լիս, որ ծծերը խոշոր են,
հետևապէս՝ և՛ շատ կաթ
կարող են տալ:

ոչ թէ ձևը, այլ ծաւալը նշանակութիւն ունի. և
եթէ մի քանի ձևեր յարգի են, զբա պատճառն
այն է, որ նրանք մեծ ծաւալ ունեն և համապա-
աստիսան են մեծ ծծերի:

Ընդհանրապէս ամենից յարգւած են այն կաթ-
նանիշները, որոնք տարածւում են ծծի ներքևի մա-
սերի վրայ, յետոյ բարձրանալով բունում են միջնայ-
քի մեծ մասը և հասնում
են վերև մինչև ծննդա-
կան դործարանը: Քնարա-
ձևերը շատ լաւ են. նոյն-
քան լաւ են լինում շատ
անդամ նաև եղերքոտնե-
րը. յետոյ գալիս են կո-
րագծաձևերը, ուղղաչա-
փաձևերը, երկեղջիւրաձե-
ւերը, զինամանաձևերը և
վերջապէս լիմուղեանները
և քառակուսիաձևերը, ո-
րոնք ամենից քիչ են յար-
զի:

Մի կաթնանիշ, որի
ներքևի մասը լայն չէ, թէ-
կուզ շատ վերև էլ բարձրանայ—միշակ է համար-
ւում: Քիչ բարձրացող կաթնանիշը գոնէ պէտք է
լայն տարածւի ծծերի և բարձերի վրայ, որ յարգի
համարւի. օրինակ մի եղերքոտ կաթնանիշ կարող
է վատ լինել, եթէ՝ վերևի մասի պէս, ներքևի մա-
սրն էլ նեղ և քիչ զարգացած լինի և աւելի վատ



պատկ. 21.

Ուղղաչափած կաթնանիշ,
որի վերևի մասում երևում է
ուղղանկիւնի ձևով մի երկա-
րած գութիւն:

կարող է համարել մի կորագիծ ձևից, եթէ սրա ներքեի մասն աւելի լայն տարածւած լինի:

Նորից կրկնում ենք. կաթնանիշի տարածութիւնն է որ նշանակութիւն ունի և ոչ թէ ձևը:

Կաթնանիշն ամենամեծ ծաւալն ունի այն ժամանակ, երբ լայնքով ու երկայնքով նա հասնում է իր զարգացման սահմաններին:



պատկ. 22

Գինամանածև կամ պուտուռեան կաթնանիշ բառակուսի ձևով:

մանում է կաթնանիշի մէջ. այս պատառւածքը փոքրայնում է կաթնանիշի ծաւալը, ուրեմն պակասեցնում է նաև ծծի արժէքը:

Կարող են պատահել դարձեալ ձուռաձևեր և հասկաձևեր. եթէ սրանք ծծերի վրայ լինեն (պատ. 26) և իւրաքանչիւր կողմի վրայ մի մի հատ, այդ վատ նշան չէ. ընդհակառակն զրանք լաւ կաթ-

նանիշի մասին— բաւական չէ դեռ. լինում են այնպիսի ձևեր, որոնք բոլորովին փոխում ու քչացնում են նրանց զինք:

Նախ՝ կան այնպիսի կաթնանիշներ, որոնք միօրինակ և անընդհատ չեն լինում. այլ, օրինակ, ներկայացնում են մի պատառւածք (պատ. 25): Ինչպէս երևում է նկարի մէջ, վերեւից ցած իջնող մաղերից մի անկիւնաւոր մաս

նատուների վրայ են միայն տեսնուած: Բայց եթէ ձուռաձևերը լինեն ճննդական զործարանի ներքեւ կամ հասկաձևերն ու ձուռաձևերը ճննդական զործարանի մօտերը (պատ. 18, 20, 21) կամ բարձրի վրայ— այդ վատ նշան է: Պսոռւմ են թէ այս երկու ձևերը կովի պիտակութիւնն են ցոյց տալիս. այսինքն այդ տեսակ կաթնանիշ ունեցող կովը ցուլի (բուզի) մօտենալուց յետոյ մի քիչ ժամանակ անցած՝ չորանում, կաթից կտրւում է:



պատկ. 23.

Լիմուղեան կաթնանիշ, վերև բարձրացող սրածայր անկիւնով:

Ե Ձ Ր Ա. Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն:


Այն բոլոր յատկութիւնները, որոնց մասին խօսեցինք մինչև հիմա, ինչ ասել կուզի որ բացարձակ նշանակութիւն չունին:

Կաթի շատութիւնն ու քչութիւնը ոչ միայն կովիցն է կախւած, այլ և այն խնամքից, որ ունեն կովի վրայ և այն սնունդից, որ տալիս են նրան. կարձ ասած՝ այդ կախւած է նրան շրջապատող բոլոր պայմաններից՝ միասին առած:

Բայցի այդ. նշաններից մի բանիսը կախւած են կաթնատուի առողջութիւնից, հասակից, կաթնա-

ուռութեան ժամանակից (այսինքն՝ նայած թէ նոր է կաթը տալն սկսել թէ՞ արդէն դադարելու մօտ է) և այլն:

Օրինակի համար, նոր ծնած կովը ի հարկ է աւելի զարգացած ծծեր ու երակներ կունենայ, քան թէ այն կովը, որ մօտ է չորանալուն. կամ թէ՛ առաջին անգամ ծնող կովն, ինչ ասել կ'ուզի, որ չի կարող աւելի զարգացած օրգաններ ունենալ, քան թէ մի ուրիշ կով, որ մի քանի անգամ է ծնել:



պատկ. 24

Քառակուսիաձև] [կաթնանիշ, որի վերևի մասը ուղիղ գծով կտրւած է և չունի ոչ մի երկաւրած գուծիւն:

Կարձ կապելով մեր ասելիքը, այստեղ ցոյց կը տանք այն եղանակը, որին պէտք է հետեւի կաթնատու ընտրել ցանկացողը:

Առաջին: Քննել ընդհանուր յատկութիւնները, դիտել կուրծքի, փորի, կոնքի և այլ մասերի ընդհանուր կազմւածքը. շատ դեր (չաղ) կովերը դէն զբոյժելու ընդունել միայն այն դեր կովերը, որոնք վա-

ղուց են կաթից կտրւել. բայց թողնել նաև այն կովերը, որոնք ծնելու մօտ եղած ժամանակ դիւրագրգիռ են. կենդանու առողջութիւնն իմանալ նրա նուրբ կազմւածքից, մանաւանդ մորթի և մազերի քնքշութիւնից, իսկ տարիքը որոշել—նայելով աւամներին ու եղջիւրներին:

Երկրորդ: Քննել շատ կաթ տալու կարողութեան նշանները, կարևորութիւնը տալով այս կարգով.

Մեծ և շատ տեղ բռնող ծիծ, բայց ոչ մտու:

Պտուկները մեծ-մեծ և իրարից հեռու:

Զարգացած ու լայն երակներ, մանաւանդ այն երակները, որոնք զտնուում են ծծի առաջի և միջնայքի մասերում:

Կաթի ներքևի զրան կամ աղբիւրի ծակի մեծութիւնը:

Ականջների մեծ ծաւալը:

Կաթի վերևի զրան կամ աղբիւրի, այսինքն քամակի աղոսների գոյութիւնը:

Երրորդ: Կարագոտ կաթ տալու նշանները սրանք են.

Մորթի դեղին գոյնը, որ պէտք է դիտել աչ-



պատկ. 25

Պտուտած կաթնանիշ, որ պակսեցնում է ծծի արժէքը:

բերի, ճննդական գործարանի և կարիքի ծակի փերուծ և ականջներուծ:

Մորթի իւղոտ, ճարպոտ և նուրբ թեփով ծածկւած լինելը:

Ականջների մէջ սմուկի կամ ականջաղտի գոյութիւնը:

Բերանի կոնոնների թիւր, ձեր և նրանց տարածութիւնը:



պատկ. 26

Ծծի որի վրայ երևում են հասկածե և ձուածե կաթնանիշներ և որոնք լաւ նշան են նկատուած:


Կրկարութիւնը և այլն աւելի քիչ կարեւորութիւն ունեն:

Քիչ կը պատահի, որ մի կովի բոլոր նշանները կամ վատ լինեն կամ լաւ. շատ անգամ մի քանիսը վատ են լինուած, մի քանիսը՝ միջակ: Այս դէպքուծ

Այս բոլոր յատկութիւններից կաթի որքանութեան ճասին մեզ ամենից լաւ և հեշտ տեղեկութիւն տալիս են երակներն ու ծծերը. կաթնանիշները շատ հաւանականութիւն են տալիս: Կաթի վերելի գոնեքը աւելի քիչ կարեւորութիւն ունեն:

Գալով կարագին, դրա առատ լինելու հաստատ նշաններն են մորթի գոյնը, իւղոտութիւնն ու ականջաղտի լինելը. զլխի փոքրութիւնը, պոչի

դնահատելու համար առաւելութիւնը, ի հարկէ, պէտք է տալ ամենահաստատ նշաններին, ինչպէս ծծերն են ու երակները:



ԻՓ. Ա. ԲՈՒՓՈՒՂԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Առաջին օգնութիւն մինչև բժշկի գալը (սպառ.)	5 կ.
2. Վարակիչ հիւանդութիւններ	5 »
3. Ինչ է սիֆիլիսը	5 »
4. Առողջապահական զրոյցներ	5 »
5. Ինչ է ժուժկալութիւնը	5 »
6. Ինչ է անառակութիւնը	5 »
7. Վեներական ախտեր	5 »
8. Աշակերտի առողջապահութիւն	2 »
9. Մեր նեարդերը	10 »
10. Սիֆիլիս (բարեփոխում)	10 »
11. Առողջ հոգին առողջ մարմնի մէջ	10 »
12. Գեղձախտ (զօլօտուխտ)	10 »
13. Ո՛վ է յանցաւորը	15 »
14. Կարիք և բարեգործութիւն	15 »
15. Ժառանգականութիւն և դաստիարակութիւն	15 »
16. Մանկավարժական համառօտ զրոյցներ	15 »
17. Մարմնամարզութիւն (25 պատկերով)	20 »
18. Առողջապահական նուէր նորատի կանանց	20 »
19. Կինը և տղամարդը	15 »
20. Վիրաբուժական հիւանդութիւն և օպերացիա	5 »
21. Ինչ է կաշու հիւանդութիւնը	15 »
22. Երիտասարդութիւն և ծերութիւն	15 »
23. Առողջ ու հիւանդ երեխայի ողին	20 »
24. Ուզեղի սիֆիլիսը (զլիի և ողնաշարի)	20 »
25. Ստամոքսի կատարը	20 »
26. Քուն և երազ (մի մեծ պատկերով)	25 »
27. Գործարան թէ երկրագործութիւն	15 »

(Մեծադիր պատկեր «Քուն և երազ» շքեղ թղթի վրայ առանձին 10 կ.)

Ի Ի Մ Ե Լ՝ Թիֆլիս Կենդրոնական և Գուտտենբերգ Բարու Պրոմեթէոս զրախանութիւններէ.



ՅՐԿԷՄՆՆԷՍ ԱՐԱՄԵԱՆՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ ԼՈՑԻ
ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՏԵԻՆԵՍԼ ՊԵՏԿԵՐԱԶԱՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ
ԹԻԻՆՆԵՐԸ.

1. Բեօրնսօն՝ կազմեց Ե. Թոփչեան . . .	10	կ
2. Մահմեդ՝ » » » . . .	7	»
3. Մեսրոպ Մաշտոց՝ կազմեց Ե. Թ. . .	5	»
4. Սահակ Պարթև՝ » » . . .	5	»
5. Հառւպաման՝ » » . . .	15	»
6. Մեծն Ներսէս՝ » » . . .	5	»
7. Զրադաշտ կազմեց Մ. Թ. Ժամաձեան . . .	7	»

Հուտով լոյս է տեսնելու՝

1. Պուշկին.
2. Վիրխով.

Պատրաստ է տպագրութեան համար՝

Ա. Բալանթար.—Հանրամատչելի ձեռնարկ կաթ-
նառնաեսութեան

Պատրաստուում են նոր հրատարակութիւններ:

Գինն է 15 ԳՊԳ.

ԴԻՍԵԼ՝

- 1) С.-Петербург: У. М. Армянца. Ап-
ская 38.
- 2) Минск: Книжной магазин Гур-
дьева.
- 3) Баку: М-во „Прометей“. Пр-
ская д. Амуровича.